

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2020թ. հունիսի 5-ի առցանց նիստի

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 32-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

Օրակարգ

1. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:
2. Հաղորդում 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին:
3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Պետական քննական հանձնաժողովների նախագահներն ամփոփ տեղեկություններ ներկայացրին ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ա.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

2. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին:

Պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Ընթացիկ հարցեր

3.1. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Լիլիթ Վարազյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական դեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ Լիլիթ Վարազյանի՝ «Վարչարարության առանձնահատկությունների սահմաններն ընտրական գործընթացում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական

գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Գ.Դանիելյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.2. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ասպիրանտ Արթուր Աբովյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ասպիրանտ Արթուր Աբովյանի՝ «Ներմայրցամաքային պետությունների իրավունքների ապահովման հիմնախնդիրը միջազգային իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Վիգեն Քոչարյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ասպիրանտ Օքսաննա Դիրանդյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ամբիոնի հեռակա ասպիրանտ Օքսաննա Դիրանդյանի՝ «Դատական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները վարչական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք՝ դատարանական գնումներ, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վահե Հովհաննիսյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.4. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ասպիրանտ Լարիսա Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ամբիոնի հեռակա ասպիրանտ Լարիսա Բաղդասարյանի՝ «Կորպորատիվ իրավահարաբերություններից բխող գործերի քննության առանձնահատկությունները դատավարական իրավունքում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք՝

դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վահե Հովհաննիսյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.5. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ասպիրանտ Գոհար Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ամբիոնի հեռակա ասպիրանտ Գոհար Գրիգորյանի՝ «Տինանսական առողջացման հիմնախնդիրները սնանկության վարությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վահե Հովհաննիսյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.6. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Հայարփի Զարգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ Հայարփի Զարգարյանի՝ «Երեխայի լավագույն շահի և ազատ տեղաշարժվելու իրավունքի հարաբերակցությունն ընտանեկան հարաբերություններում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Արմեն Հայկյանցին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.7. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հայկ Վրեժի Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբրուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հայկ Մարգարյանի՝ «Քրեական պատասխանատվությունը արտոնագրային, հեղինակային և հարակից իրավունքները խախտելու համար» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Տիգրան Միմոնյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.8. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Սևակ Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Սևակ Պողոսյանի՝ «Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Արա Գաբուզյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.9. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Նելլի Տեր-Թորոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Նելլի Տեր-Թորոսյանի՝ «Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման առանձնահատկությունները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Սերգեյ Առաքելյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.10. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի երրորդ տարվա առկա ասպիրանտ Սոսե Բարսեղյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սոսե Բարսեղյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները, իսկ թեկնածուական ատենախոսությունն արդեն քննարկման փուլում է, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.11. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի երկրորդ տարվա առկա ասպիրանտ Նորայր Ավազյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նորայր Ավագյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 52 կրեդիտ կրթական և հետազոտական բաղադրիչներին, 10 կրեդիտ՝ պրակտիկայից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.12. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի երկրորդ տարվա առկա ասպիրանտ Տիգրան Դադունցի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Դադունցը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական և հետազոտական բաղադրիչներից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.13. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի երկրորդ տարվա առկա ասպիրանտ Մարտուն Ստեփանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարտուն Ստեփանյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական և հետազոտական բաղադրիչներից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.14. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ասպիրանտ Արթուր Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արթուր Վարդանյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները կրթական և հետազոտական բաղադրիչներից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.15. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի երրորդ տարվա առկա ասպիրանտ Առնոլդ Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Առնոլդ Վարդանյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները, իսկ թեկնածուական ատենախոսությունն արդեն նշանակված է պաշտպանության, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.16. ԼՄԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Էմմա Ավագյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էմմա Ավագյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ կրեդիտներ, 2019 թվականի դեկտեմբերի հանձնել է մասնագիտական քննությունը, պատրաստել է թեկնածուական ատենախոսության մոտ 75 տոկոսը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.17. ԼՄԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Ռոզա Աբաջյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռոզա Աբաջյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները, իսկ թեկնածուական ատենախոսությունն արդեն նշանակված է պաշտպանության, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.18. ԼՄԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Գևորգ Վիրաբյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Վիրաբյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

3.19. ԼՄԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Տարիել Բարսեղյանի և դոցենտ Արփինե Հովհաննիսյանի «Մտավոր սեփականության իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական

խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Տարիել Բարսեղյանի և դոցենտ Արփինե Հովհաննիսյանի «Մտավոր սեփականության իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

3.20. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Անի Մուրաֆյանի «Կեղծ և շինծու գործարքների անվավերության տեսական և գործնական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Անի Մուրաֆյանի «Կեղծ և շինծու գործարքների անվավերության տեսական և գործնական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

3.21. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ Մայադ Բադայանի՝ «Օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ Մայադ Բադայանի՝ «Օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրագործումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Գ.Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ» ԾՐԱԳՐՈՎ 2019-2020թթ.
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ*

Ավարտական աշխատանքների պաշտպանություն:

2020թ. մայիսի 25-ին և 26-ին տեղի ունեցավ «Եվրոպական և միջազգային իրավունք» ծրագրով ավարտական աշխատանքների պաշտպանությունը:

Պաշտպանության էր ներկայացվել 41 ավարտական աշխատանք, որոնց հեղինակներից 12-ը ստացան «գերազանց» գնահատական, 16-ը՝ «լավ» գնահատական, 13-ը՝ «բավարար»:

Ընդհանուր բնույթի եզրահանգումներ:

Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունն իրականացվել է հրապարակայնորեն՝ առցանց ձևաչափով: Վերջինս, ներկա պայմաններում, միակ հնարավոր եղանակն է ավարտական աշխատանքների պաշտպանությունը կազմակերպելու համար և, իր առավելություններով հանդերձ, այնուամենայնիվ, հանձնաժողովի անդամներին օբյեկտիվորեն ավելի սահմանափակ հնարավորություն է տալիս պաշտպանության որակի մասին առավել լիարժեք և համակողմանի պատկերացում կազմելու համար, քան ավանդական եղանակը: Օրինակ, առանձին դեպքերում հանձնաժողովի անդամների մոտ ողջամիտ կասկած էր առաջանում աշխատանքի թեմային տիրապետելու մակարդակի որոշակիացման համար հանձնաժողովի անդամների տված հարցերին ուսանողի՝ ինքնուրույն պատասխանելու առնչությամբ և այլն:

Ավարտական աշխատանքների թեմաների մեծ մասն աչքի էր ընկնում իր արդիականությամբ ու գործնական նշանակությամբ և լայն հնարավորություն էր տալիս հեղինակներին համապատասխան ոլորտում առկա խնդիրները բացահայտելու, լուծումներ առաջարկելու, ինչպես նաև ինքնուրույն հետազոտական, համեմատական և վերլուծական աշխատանք կատարելու համար և, պետք է նշել, որ ուսանողների մեծ մասը բավական արդյունավետ է օգտագործել այդ

հնարավորությունը: Աշխատանքների զգալի մասն առանձնանում էր կատարված վերլուծությունների ու եզրահանգումների ինքնուրույնությամբ, համակողմանի ուսումնասիրություններով, օգտագործված տեսական նյութի բազմազանությամբ, պետությունների ու միջազգային դատարանների փորձից բերված օրինակների քանակով:

Այդուհանդերձ հանդիպում էին նաև ընդհանուր բնույթի կամ լայն թեմաներ, օրինակ, այդպիսի թեմաներից է՝ «ՄԱԿ-ի ձևավորման պատմությունը, սկզբունքներն ու նպատակները» թեման և այլն:

Պաշտպանության ներկայացված թեմաների զգալի մասն ընտրված էին միջազգային իրավունքի հետևյալ 3 ոլորտներից կամ ճյուղերից՝ «Անհատը և միջազգային իրավունքը», «Միջազգային մարդասիրական իրավունք», «Միջազգային քրեական իրավունք»: Մեկ կամ երկու թեմայով ներկայացված էին նաև «Միջազգային իրավունքի սուբյեկտներ», «Միջազգային կազմակերպությունների իրավունք», «Միջազգային պայմանագրերի իրավունք» «Դիվանագիտական և հյուպատոսական իրավունք», «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորումը» ճյուղերը: Գիտակցելով միջազգային իրավունքի բոլոր ճյուղերի ներկայացման առումով լիարժեք հավասարակշռման կամ համամասնության հասնելու օբյեկտիվ դժվարությունները, այդուհանդերձ, կարծում եմ, ապագայում կարելի է փորձել ավարտական աշխատանքների թեմաների ընտրության գործընթացը կազմակերպել այնպես, որ, թեկուզ հարաբերականորեն, բայց ապահովվի այդ համամասնությունը և ընտրվող թեմաների մեջ ներառվեն միջազգային իրավունքի մյուս ճյուղերից ու ոլորտներից ոչ պակաս կարևոր և արդիական թեմաներ ևս: Օրինակ, ներկա իրողությունում, կարծում եմ, գիտական ու գործնական լուրջ նշանակություն կարող են ունենալ ԵՏՄ-ին և նրա գործունեության առանձնահատկություններին նվիրված աշխատանքները: Գիտական արդի հետազոտությունների և ուսումնասիրությունների համար հարուստ նյութ կա նաև Միջազգային իրավական պատասխանատվության և Միջազգային անվտանգության ոլորտում և այլն:

Կարծում եմ, առանձին աշխատանքներում տեղ գտած բովանդակային թերությունների հիմնական պատճառներից մեկն աշխատանքի նախապատրաստական փուլում ղեկավարի հետ ուսանողի ոչ այնքան սերտ համագործակցության հետևանքն է: Ակնհայտ է, որ սա աշխատանքների որակի բարձրացմանն ուղղված առաջնային լուծում պահանջող խնդիրներից մեկն է, որին ապագայում հարկ է պատշաճ ուշադրության արժանացնել:

Պետական քննական հանձնաժողովի նախագահ,

Սահմանադրական դատարանի դատավոր, ի.գ.թ.

Ա. Դիլանյան

04.06.2020թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԾՐԱԳՐՈՎ
2019-2020թթ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պետական քննություններ:

2020թ. մայիսի 18-ին և 20-ին տեղի ունեցավ նախորդ տարիների շրջանավարտների պետական քննություն Պետության և իրավունքի տեսություն, Սահմանադրական իրավունք առարկաներից: Քննությանը ներկայացան 3 ուսանող, որոնցից 1 ուսանող ստացավ «լավ» գնահատական, 2 ուսանող՝ «բավարար» գնահատական:

Ավարտական աշխատանքների պաշտպանություն:

2019թ. մայիսի 18-ին և 20-ին տեղի ունեցավ «Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք» ծրագրով ավարտական աշխատանքների պաշտպանությունը:

Պաշտպանության ներկայացվեց 28 ավարտական աշխատանք, որոնցից 8 ուսանող ստացավ «գերազանց» գնահատական, 11 ուսանող «լավ» գնահատական, 9 ուսանող՝ «բավարար» գնահատական:

Անդամուր քննության եզրահանգումներ:

Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը եւ պետական քննություններն իրականացվել են հրապարակայնորեն՝ առցանց ձեւաչափով՝ նախատեսված նորմատիվ պահանջների պահպանմամբ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի և պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի կողմից ավարտական աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվել իրավական մտքի արդի զարգացումները և այն մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները ժամանակակից հասարակական

հարաբերությունների կանոնակարգման տեսանկյունից ունեն առաջնահերթ նշանակություն: Ի տարբերություն նախորդ տարիների՝ փոքր թիվ է կազմել ընդհանուր բնույթի և լայն թեմաների ընտրությունը:

Թեև աշխատանքներն ընդհանուր առմամբ աչքի էին ընկնում հեղինակների կողմից նյութի տիրապետման և ներկայացման աստիճանով, սակայն դրանց մի մասն ուներ սոսկ ճանաչողական, նկարագրական բնույթ, աշխատանքի շրջանակներում կատարված չէր գիտական հետազոտությունների մեթոդաբանությանը համապատասխան՝ անհրաժեշտ վերլուծություն: Կարծում եմ, որ նշված խնդիրն առաջիկայում ունի հաղթահարման անհրաժեշտություն՝ առաջին հերթին գիտական աշխատանքներին ներկայացվող չափանիշների վերաիմաստավորման և աշխատանքների ներկայացման հմտությունների զարգացման տեսանկյունից, և պետք է անընդհատ գտնվի ամբիոնների ուշադրության կենտրոնում:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ աշխատանքների մեծամասնությունում վերլուծված էր համարժեք գիտական գրականություն, եւ աշխատանքների ճնշող մեծամասնությունը կազմված էր սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխան:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ ժամանակակից գիտությունն ընթանում է միջդիսցիպլինար հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Պատճառն այն է, որ առավել ճշգրիտ գիտական եզրահանգումները հնարավոր են սոսկ երևույթների բոլոր ասպեկտների հետազոտության, վերլուծության և ամփոփման արդյունքում: Ակնհայտ է, որ սահմանադրաիրավական ինստիտուտների առնչությամբ եզրահանգումները ևս չեն կարող հավաստի և ամբողջական լինել սոսկ իրավական հետազոտության արդյունքում և ենթադրում են նաև քաղաքական, հոգեբանական, սոցիոլոգիական և այլ ասպեկտների վերլուծություն: Կարծում եմ, որ եզրահանգումների հավաստիությունն ու ամբողջականությունը երաշխավորելու տեսանկյունից ավարտական աշխատանքների շրջանակներում անհրաժեշտ է հենց նման միջդիսցիպլինար հետազոտության իրականացումն ու նաև քաղաքագիտության, քաղաքական հոգեբանության, սոցիոլոգիայի և այլ վերաբերելի գիտությունների շրջանակներում առկա տվյալների, մեթոդաբանության, կատարված եզրահանգումների վերլուծությունն ու ամփոփումը:

Աշխատանքների առնչությամբ ներկայացված գրախոսականների մեծամասնությունը ևս կատարված էր պատշաճ մակարդակով: Ավելին, պետության եւ իրավունքի տեսության ու պատմության գծով ներկայացված ավարտական աշխատանքների մեծ մասի գրախոսողները ներկա էին աշխատանքների պաշտպանությանը՝ անձամբ ներկայացնելով աշխատանքների առնչությամբ իրենց նկատառումները:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել նաև ուսանողների մոտ վերլուծական մտածողության և նյութը ներկայացնելու հմտությունների զարգացմանը: Այդ առումով առաջնահերթ նշանակություն ունի կարծրատիպային և մեխանիկական մտածողության հաղթահարումը, ինչը երբեմն նկատելի է ուսանողների մոտ: Դասագրքում կամ ձեռքի տակ եղած իրավական ակտում

ներկայացված գաղափարների մեխանիկական վերարտադրությունը չի կարող գիտելիքի գնահատման և գիտական հետազոտության իրականացման առանցքային չափանիշ հանդիսանալ: Ավելին, դասագիրքն էլ ուսանողի կողմից չպետք է դիտարկվի որպես հիմնախնդրին ծանոթանալու միակ աղբյուր: Հետևաբար, գիտական հետազոտության իրականացման ու հետազայում դրա գնահատման հիմնական չափանիշը պետք է լինի ոչ թե կարդացածի անգիր ու մեխանիկական վերարտադրությունը, այլ կատարված գիտական հետազոտության որակն ու այն ներկայացնելու հմտությունները:

**Պետական քննական հանձնաժողովի նախագահ,
Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր,
Ի.գ.թ., դոցենտ
27.05.2020թ.**

Ա. Մանասյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

20-29 Հունվարի 2020թ.

Մագիստրոսական թեզի ամփոփիչ ատեստավորման են մասնակցել

75 ուսանող, չեն մասնակցել 3 ուսանող:

1. Քրեական իրավունք և կրիմինալիստիկա մասնագիտացում՝ 20 ուսանող

- գերազանց 13
- լավ 7
- բավարար 0
- անբավարար 0
- չներկայացած 0

1. Կրիմինալոգիա մասնագիտացում՝ 10 ուսանող

- գերազանց 6
- լավ 4
- բավարար 0
- անբավարար 0
- չներկայացած 0

2. Քաղաքացիական իրավունք և դատավարություն՝ 8 ուսանող.

- գերազանց 7
- լավ 1
- բավարար 0
- անբավարար 0
- չներկայացած 0

3. Գործարարական իրավունք՝ 7 ուսանող.

- գերազանց 6
- լավ 0

- բավարար 0
- անբավարար 0
- չներկայացած 1

4. Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք՝ 13 ուսանող

- գերազանց 9
- լավ 2
- բավարար 2
- անբավարար 0
- չներկայացած 0

5. Եվրոպական և միջազգային իրավունք՝ 20 ուսանող

- գերազանց 5
- լավ 14
- բավարար 1
- անբավարար 0
- չներկայացած 2

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի՝ 2019-2020 ուս. տարվա մագիստրոսական թեզերի պաշտպանություններն աչքի են ընկել կազմակերպվածության բարձր մակարդակով, ընթացել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան, և այդ հարցում որևէ շեղում կամ թերացում չի եղել: Մագիստրոսական թեզերի պաշտպանությունը կազմակերպվել է հրապարակայնորեն՝ նախատեսված նորմատիվ պահանջների պահպանմամբ:

ԱԱՀ ՆԱԽԱԳԱՀ



Ս. Առաքելյան

10.02.2020թ.

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

2019-2020 ուս. տարվա բակալավրիատի շրջանավարտների՝
«Քրեական իրավունք» և «Քրեական դատավարություն» առարկաներից
ավարտական աշխատանքների պաշտպանության մասին

1. Քրեական իրավունք.

✓ 2020թ. մայիսի 21-22-ին տեղի ունեցավ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը «Քրեական իրավունք» առարկայից: Պաշտպանությանը ներկայացան **25 ուսանող:**

Պաշտպանության արդյունքներն են՝

20 միավոր	-	3 ուսանող
19 միավոր	-	3 ուսանող
18 միավոր	-	4 ուսանող
17 միավոր	-	3 ուսանող
16 միավոր	-	0 ուսանող
15 միավոր	-	3 ուսանող
14 միավոր	-	2 ուսանող
13 միավոր	-	4 ուսանող
12 միավոր	-	2 ուսանող
11 միավոր	-	1 ուսանող
10 միավոր	-	0 ուսանող
9 միավոր	-	0 ուսանող
8 միավոր	-	0 ուսանող
անբավարար	-	0 ուսանող

2. Քրեական դատավարություն.

✓ 2020թ. մայիսի 25-26-ին տեղի ունեցավ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը «Քրեական դատավարություն» առարկայից: Պաշտպանությանը ներկայացան **21 ուսանող:**

Պաշտպանության արդյունքներն են՝

20 միավոր	-	1 ուսանող
19 միավոր	-	5 ուսանող
18 միավոր	-	2 ուսանող
17 միավոր	-	3 ուսանող
16 միավոր	-	1 ուսանող
15 միավոր	-	1 ուսանող
14 միավոր	-	2 ուսանող
13 միավոր	-	1 ուսանող
12 միավոր	-	3 ուսանող
11 միավոր	-	0 ուսանող
10 միավոր	-	1 ուսանող
9 միավոր	-	0 ուսանող
8 միավոր	-	1 ուսանող
անբավարար	-	0 ուսանող

3. Կարելի է բարելավում արձանագրել.

- 1) հրապարակային պաշտպանության գործընթացը հեռավար կարգով արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու առումով,
- 2) ավարտական աշխատանքների թեմատիկայի կատարելագործման առումով. դրանք ավելի կիրառական նշանակություն ունեցող են դարձել,
- 3) պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքների պատրաստման ընթացքում օտարալեզու, մասնավորապես՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով գրականության հաճախակի կիրառման առումով, ինչն անհրաժեշտ է խրախուսել, որովհետև միջազգային փորձի օգտագործումն այսօր օրախնդիր է,

4) գրախոսականներում տեղ գտած դիտողություններին և նկատառումներին գրեթե բոլոր պաշտպանողների կողմից պատշաճ արձագանքելու առումով:

4. Մտահոգության տեղիք է տալիս.

- 1) ուսանողները բավականաչափ խորությամբ չեն վերլուծում իրավակիրառ պրակտիկան՝ լավագույն դեպքում սահմանափակվելով միայն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից մեջբերումներով,
- 2) ղեկավարների և գրախոսողների կարծիքներում այնպիսի հանգամանքների մատնանշման բացակայությունը, որոնք հնարավորություն կտան հանձնաժողովի անդամներին առավել ամբողջական, բազմակողմանի պատկերացում կազմել իրապարակային պաշտպանության ներկայացվող աշխատանքների վերաբերյալ:

5. Առաջարկություններ.

Անհրաժեշտ են համարում՝

1. Գործուն միջոցների ձեռնարկումը, կապված ավարտական աշխատանքների ղեկավարների պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ (լրացուցիչ վարձատրություն, անհրաժեշտ ժամանակի տրամադրում, բեռնաթափում, կատարված աշխատանքի գնահատում և այլն):

2. Կուրսային, գիտական, ավարտական աշխատանքների և մագիստրոսական, թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների էլեկտրոնային բազայի ստեղծումը, որի միջոցով հնարավոր կլինի՝

ա) իրականացնել հսկողություն և բարձրացնել նշված աշխատանքների որակը՝ բացառելով արտագրությունները,

բ) ապահովել նշված էլեկտրոնային բազայից ուսանողների, դասախոսների, պրակտիկ աշխատողների, ինչպես նաև ոլորտի նկատմամբ հետաքրքրություն ունեցող այլ անձանց օգտվելը:

3. Միջոցների ձեռնարկումը՝ ուղղված ղեկավարների և գրախոսողների կարծիքներում բոլոր այն հանգամանքների պատշաճ պարզաբանմանը (ինքնուրույնության աստիճանը, մտքերի շարադրման որակը և այլն), որոնք հնարավորություն կտան հանձնաժողովի անդամներին առավել հստակ կողմորոշվել գնահատական նշանա-

կելիս, հիմնական ուշադրության արժանացնելով միայն հրապարակային պաշտպանության գործընթացին:

6. Եզրակացություն.


✓ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի 2019-2020 ուս. տարվա ավարտական աշխատանքների ս/թ մայիսի 21-26-ին կայացած պաշտպանությունների արդյունքները վկայում են ընդհանուր առմամբ շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին: Մասնավորապես, ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող ցուցանիշներով.

	<i>ուսանող</i>	<i>գերագ. (18-20)</i>	<i>լավ (13-17)</i>	<i>բավ. (8-12)</i>	<i>անբավ. (0-8)</i>	<i>չներկ.</i>
Քրեական իրավունք	25	10	12	3	—	—
Քրեական դատավարություն	21	8	8	5	—	—
Ընդամենը (%)	46 (100.0%)	18 (39.1%)	20 (43.5%)	8 (17.4%)	— (0.0%)	— (0.0%)

Պետական քննական հանձնաժողովի նախագահ,

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արդարադատության

ակադեմիայի ռեկտոր՝



Ս. Առաքելյան